«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԴԵՂՈՐԱՅՔԻ, ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ» ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳՀԱՊՁԲ-2020/16-20-8-ԵՊԲՀ»

ք. Երևան «___» «_____» 2020թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Ա.Ա. Մուրադյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝ Ա.Մանուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է՝ 5 720 000,0/հինգ միլիոն յոթ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների /չափաբաժիններ՝ N57, 58, 59, 62-73-րդ/ համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը

սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային

օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է __15__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ	«ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	ք. Երևան,Լեռ-12
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
հ/հ 11500166513800	ՀՀ163008142792
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ02205001
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	medtechservice@mail.ru
---	հեռ:+37410 53-36-30, 53-36-50
/ստորագրություն/	Տնօրեն՝ Ա.Մանուկյան
Կ.Տ	---
	/ստորագրություն/
	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.09.22 12:42:28 AMST

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2020.09.17 10:28:18 GMT+04:00

Հավելված N 1
« » 2020թ. կնքված
N «ԳՀԱՊՁԲ-2020/16-20- 8-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ապրանքի										
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
57	33161120	Բիպոլյար աշխատանքային էլեմենտ ակտիվ	Richard Wolf GmbH/Germany/	Բիպոլյար աշխատանքային էլեմենտ ակտիվ, նախատեսված Shark ռեզեկտոսկոպի համար: Աշխատանքային էլեմենտը նախատեսված 4 մմ, 12°/30° Richard Wolf տելեսկոպի համար, շարունակական իրիգացիայով, պարտադիր պայման է ակտիվ կտրման մեխանիզմի առակայությունը, ունի ձեռքով կարգավորվող կտրման մեխանիզմ՝ օժանդակված զսպանակային անջատիչով 22Fr ստանդարտ և 24,5Fr շարունակական իրիգացիայի ռեզեկտեսկոպի տուբուսների համար: Աշխատանքային էլեմենտը պատրաստված է չժանգոտվող պողպատից: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը , երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	1 080 000,00	1 080 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
58	33161120	Ռեզեկտոսկոպի արտաքին տուբուս 26Fr	Richard Wolf GmbH/Germany/	Richard Wolf ռեզեկտոսկոպի հետ համատեղելի պտտվող շարունակական իրիգացիայով արտաքին կլոր տուբուս 26Fr, նախատեսված շարունակական իրիգացիայի կրկնակի տուբուսների համակարգի համար հատուկ պրոֆիլավոր շրջանաձեւ ակոսավոր մակերեսով, ավտոմատիկ փականային կոնստրուկցիայով, եզրային հատվածը ատրավմատիկ հատուկ կարբոնային համաձուլվածքից: Սարքը համապատասխանում է համանուն արտադրողի ներքին տուբուսին: Տուբուսը համատեղելի է Richard Wolf 4 մմ, 0, 5, 12, 25, 30 աստիճան տելեսկոպների հետ, նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները,	հատ	285 000,00	285 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում

				բժշկական անձնակազմին սարքի օգտագործման եղանակներին ծանոթացնելը , երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:							
59	33161120	Ռեզեկտոսկոպի ներքին տուբուս 24Fr	Richard Wolf GmbH/Germany/	Richard Wolf ռեզեկտոսկոպի 24 Fr, շարունակական իրիգացիայով ներքին կլոր տուբուս, նախատեսված շարունակական իրիգացիայի կրկնակի տուբուսների համակարգի համար, ուղիղ դիստալ, ծայրեզրը անթափանց կերամիկայի իզոլյացիայով, լյուերի փականով, ավտոմատիկ փականային կոնստրուկցիայով: Սարքը համապատասխանում է արտաքին տուբուսին: Տուբուսը համատեղելի է Richard Wolf 4 մմ, 0, 5, 12, 25, 30 աստիճան տելեսկոպների հետ: Աշխատանքի էլեմենտը տուբուսում մինչև 360° պտտվի: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին սարքի օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	465 000,00	465 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
60	33161120	Կոագուլյացիոն բիպոլյար էլեկտրոդ 24-26FR 12/30°	Richard Wolf GmbH/Germany/	Կոագուլյացիոն բիպոլյար էլեկտրոդը 24-26FR նախատեսված է Richard Wolf Shark տեսակի ռեզեկոսկոպի համար, և համատեղելի է Wolf panoview 4 մմ տելեսկոպի հետ, ընդհատվող/շարունակական 24/26 Fr տուբուսի աշխատանքի համար: Էլեկտրոդը գլանաձև cylinder , մետաղալարի հաստությունը Ø 1.2 մմ, գույնը կապույտ: Ստերիլ վիճակում, մեկանգամյա օգտագործման համար: Ֆորմատ՝ 3 հատ տուփում/հատ: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը: Մատակարարման պահին պիտանիության ժամկետի առնվազն 1/2-ի առկայություն:	հատ	203 000,00	406 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
61	33161120	Բիպոլյար կտրող էլոկտրոդ 24FR 12/30°	Richard Wolf GmbH/Germany/	Բիպոլյար կտրող էլոկտրոդ 24FR նախատեսված է Richard Wolf Shark տեսակի ռեզեկոսկոպի համար, և համատեղելի է Wolf panoview-ի հետ, ընդհատվող/շարունակական 24/26 Fr տուբուսի աշխատանքի համար: Էլեկտրոդը կլոր է, մետաղալարը Ø 0.3 մմ, գույնը կապույտ: Ստերիլ վիճակում, միանգամյա օգտագործման համար: Ֆորմատ՝ 3 հատ տուփում/հատ: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը: Մատակարարման պահին պիտանիության ժամկետի առնվազն 1/2-ի առկայություն:	հատ	250 000,00	500 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
62	33161120	Ճկվող բիոպսիոն	Richard Wolf	Ճկվող է 4Fr, աշխատանքային երկարությունը, 600 մմ,	հատ	430 500,00	430 500,00	1	ք. Երևան,	1	2020

		պինցետ	GmbH/Germany/	կրկնակի գործողությամբ, ընդհանուր երկարությունը՝ 730 մմ, նախատեսված է բազմակի օգտագործման համար՝ Richard Wolf երկկանալ ռենոսկոպի միջով աշխատելու համար: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:					Աբովյան 60 և/կամ Մուրացան 114		թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
63	33161120	Ճկվող սեղմիչ	Richard Wolf GmbH/Germany/	ճկվող 4Fr, աշխատանքային երկարությունը 600 մմ, կրկնակի գործողությամբ, ընդհանուր երկարությունը՝ 750 մմ, նախատեսված է բազմակի օգտագործման համար՝ Richard Wolf երկկանալ ռենոսկոպի միջով աշխատելու համար: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	430 500,00	430 500,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
64	33161120	Լազերային ֆիբրային մալուխ	Richard Wolf GmbH/Germany/	Մալուխի տրամաչափը 272նմ, ստերիլ է, բազմանվագ օգտագործման համար, 10 անգամ օգտագործման հնարավորություն: Ֆիբրային մալուխը համատեղելի է Մեգապուլս լազերային սարքի հետ և Կոբրա Richard Wolf երկկանալ ռենոսկոպի միջով աշխատելու համար: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	480 000,00	960 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
65	33161120	Նշտար կիսակլոր 20,5 Fr	Richard Wolf GmbH/Germany/	Նշտար կիսակլոր 20,5 Fr: Նախատեսված է Richard Wolf օպտիկական ուրետրոտոմիայի համար, բազմանվագ օգտագործման: Ստրիկտուրաների նշտարի կառուցվածքը հատուկ մետաղական ամուր համաձուլվածքից է: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12	հատ	55 000,00	55 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու

				ամիս:							օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
66	33161120	Նշտար 20,5 Fr	Richard Wolf GmbH/Germany/	Նշտար 20,5 Fr: Նախատեսված է Richard Wolf օպտիկական ուրետրոտոմիայի համար, բազմանվագ օգտագործման: Ստրիկտուրաների Նշտարի կառուցվածքը հատուկ մետաղական ամուր համաձուլվածքից: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	55 000,00	55 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
67	33161120	Նշտար մանգաղատիպ 20,5 Fr	Richard Wolf GmbH/Germany/	Նշտար մանգաղատիպ 20,5 Fr: Նախատեսված Richard Wolf օպտիկական ուրետրոտոմիայի համար, բազմանվագ օգտագործման: Նշտարի կառուցվածքը հատուկ մետաղական ամուր համաձուլվածքից: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	55 000,00	55 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
68	33161120	Բիպոլյար մալուխ/1	EMED , Poland	Ուրոլոգիական ռեզեկոտսկոպիայի բիպոլյար մալուխ նախատեսված բազմակի օգտագործման համար, երկարությունը՝ 4,5մ, գործիքի միացման հատվածի արտաքին տրամագիծը՝8 մմ, ներքինը տրամագիծը 2,5մմ: Համատեղելի է Emed ES350 ընկերության վիրաբուժական դանակի հետ: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	45 000,00	90 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
69	33161120	Բիպոլյար պինցետ ուղիղ	EMED , Poland	Բիպոլյար վիրաբուժական պինցետ ուղիղ, ընդհանուր երկարությունը 195 մմ, աշխատանքային երկարությունը՝1մմ, Emed ES350 ընկերության	հատ	90 000,00	90 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարար

				վիրաբուժական դանակի հետ համատեղելի: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը ,երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:					ն 114		ումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
70	33161120	Բիպոլյար մալուխ/2	EMED , Poland	Ուրոլոգիական ռեզեկոտսկոպիայի մալուխ բազմակի օգտագործման՝ բիպոլյար մալուխ, երկարությունը 3մ, գործիքի միանալու մասը երկու հատ 29 մմ խրոցով: Համատեղելի է Emed ES350 ընկերության կոագուլյատորի հետ: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը , երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	40 000,00	40 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
71	33161120	Բիպոլյար մկրատ	EMED , Poland	Մկրատը բիպոլյար է, կոր, երկարությունը 21 սմ, եզրը կլոր դիսսեկցիոն մակերեսով, ատրավամտիկ և հատուկ ծածկով: Emed ES350 ընկերության վիրաբուժական դանակի հետ համատեղելի, նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը ,երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	320 000,00	320 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
72	33161120	Բիպոլյար մալուխ/3	EMED , Poland	Բիպոլյար մալուխ նախատեսված BiTech երկբևեռ մկրատի համար: Համատեղելի է Emed ES350 ընկերության կոագուլյատորի հետ: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը , երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	68 000,00	68 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային

											օրվա ընթացքում
73	33161120	Ուրետրոցիստոսկոպի պատյան	Richard Wolf GmbH/Germany/	Ուրետրոցիստոսկոպի պատյան 21Fr. Անընդհատ իրիգացիայով, 2 գործիքների ներդրման պորտով: Պորտերի չափսերը 2 x 6 fr, 1 x 10 fr երկու պորտերի փակման և բացման պտուտակ , անընդհատ իրիգացիայի համար նախատեսված ելքերի բացման և փակման պտուտակներ: Օվալաձև, դիստալ կտրվածքով: Տուբուսի վրա `10 մակարդակի գծանշումներ: Աշխատանքային մասի երկարությունը՝ 20 սմ: Համատեղելի է՝ 0° -12° -30° -70° օպտիկաների համար: Գունային կոդավորումը կապույտ: Համատեղելի է Richard Wolf ընկերության ուրետրոցիստոսկոպի հետ: Նոր, չօգտագործված: Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, կարգավորումները, բժշկական անձնակազմին օգտագործման եղանակներին ծանոթացնելը , երաշխիքային ժամկետը մատկարարման պահից 12 ամիս:	հատ	390 000,00	390 000,00	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	2020 թվականին՝ ապրանքի մատակարարումն իրականացվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացույցային օրվա ընթացքում
Ընդամենը						5 720 000,00					

*Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:

1. Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից՝ Գնորդի նշված հասցեով՝ ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:

2. Մատակարարված Ապրանքի դիմաց վճարումն իրականացվում է 30 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2020թ. դեկտեմբերի 30-ը:

ԳՆՈՐԴ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.09.22 12:42:49 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
ք. Երևան,Լեռ-12
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ163008142792
ՀՎՀՀ02205001
medtechservice@mail.ru
հեռ:+37410 53-36-30, 53-36-50
Տնօրեն՝ Ա.Մանուկյան

/ստորագրություն/ Կ.Տ

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2020.09.17 10:28:38 GMT+04:00

Հավելված N 2
« » 2020թ. կնքված
N«ԳՀԱՊՁԲ-2020/16-20-8-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
57	33161120	Բիպոլյար աշխատանքային էլեմենտ ակտիվ	-	-	-	-	-	-	-	-	-	1 080 000,00	1 080 000,00	1 080 000,00	1 080 000,00
58	33161120	Ռեզեկտոսկոպի արտաքին տուբուս 26Fr	-	-	-	-	-	-	-	-	-	285 000,00	285 000,00	285 000,00	285 000,00
59	33161120	Ռեզեկտոսկոպի ներքին տուբուս 24Fr	-	-	-	-	-	-	-	-	-	465 000,00	465 000,00	465 000,00	465 000,00
60	33161120	Կոագուլյացիոն բիպոլյար էլոկտրոդ 24-26FR 12/30°	-	-	-	-	-	-	-	-	-	406 000,00	406 000,00	406 000,00	406 000,00
61	33161120	Բիպոլյար կտրող էլոկտրոդ 24FR 12/30°	-	-	-	-	-	-	-	-	-	500 000,00	500 000,00	500 000,00	500 000,00
62	33161120	Ճկվող բիոպսիոն պինցետ	-	-	-	-	-	-	-	-	-	430 500,00	430 500,00	430 500,00	430 500,00
63	33161120	Ճկվող սեղմիչ	-	-	-	-	-	-	-	-	-	430 500,00	430 500,00	430 500,00	430 500,00
64	33161120	Լազերային ֆիբրային մալուխ	-	-	-	-	-	-	-	-	-	960 000,00	960 000,00	960 000,00	960 000,00
65	33161120	Նշտար կիսակլոր 20,5 Fr	-	-	-	-	-	-	-	-	-	55 000,00	55 000,00	55 000,00	55 000,00
66	33161120	Նշտար 20,5 Fr	-	-	-	-	-	-	-	-	-	55 000,00	55 000,00	55 000,00	55 000,00
67	33161120	Նշտար մանգաղատիպ 20,5 Fr	-	-	-	-	-	-	-	-	-	55 000,00	55 000,00	55 000,00	55 000,00
68	33161120	Բիպոլյար մալուխ/1	-	-	-	-	-	-	-	-	-	90 000,00	90 000,00	90 000,00	90 000,00
69	33161120	Բիպոլյար պինցետ ուղիղ	-	-	-	-	-	-	-	-	-	90 000,00	90 000,00	90 000,00	90 000,00
70	33161120	Բիպոլյար մալուխ/2	-	-	-	-	-	-	-	-	-	40 000,00	40 000,00	40 000,00	40 000,00
71	33161120	Բիպոլյար մկրատ	-	-	-	-	-	-	-	-	-	320 000,00	320 000,00	320 000,00	320 000,00
72	33161120	Բիպոլյար մալուխ/3	-	-	-	-	-	-	-	-	-	68 000,00	68 000,00	68 000,00	68 000,00

73	33161120	Ուրետրոցիստոսկոպի պատյան	-	-	-	-	-	-	-	-	-	390 000,00	390 000,00	390 000,00	390 000,00

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված ապրանքների քանակի:*

*** Իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
«Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան
_____
(ստորագրությունը)Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.09.22 12:43:11 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«ՄԵԴՏԵԽՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
ք. Երևան,Լեռ-12
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ163008142792
ՀՎՀՀ02205001
medtechservice@mail.ru
հեռ:+37410 53-36-30, 53-36-50
Տնօրեն՝ Ա.Մանուկյան

/ստորագրություն/ Կ.Տ

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2020.09.17 10:28:51 GMT+04:00

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն